

ՀՀ ԿԳՄՄ նախարար

Ժաննա Անդրեասյանին

Հարցում

Հարգելի Ժաննա Անդրեասյան,

16.12. 2024 թ. Ձեզ դիմել էի հարցմամբ՝ նշելով 5 կետ:

Նկատի ունենալով ՀՀ ԿԳՄՄ նախարարության՝ N 02/22/39985-2024 պատասխանի մեջ նշված Սիվիլների մեր հարգելի գործընկերոջ էլ. հասցեների նշումը՝ կարող եմ միայն ենթադրել, որ մեր հարցման կետերը շփոթել եք Սիվիլների ենթադրյալ հարցման կետերի հետ:

Ուստի, այս գրությամբ կրկին խնդրում եմ պատասխանել մեր՝ անպատասխան մնացած հարցերին, քանի որ դրանց պատասխանները չեք ուղարկել վերոնշյալ համարով պաշտոնական փաստաթղթով:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում նախաձեռնած «Գնդակահարության պատ» նախաձեռնությանն արձագանքելով՝ Karine Zhamakochyan անուն-ազգանունով հանդես եկող օգտատերը գրել է, որ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, պատասխանել միայն 13 առաջադրանքի, հաջորդ առաջադրանքները չի տեսել, քանի որ Էկրանի վրա նշում չի եղել, որ կան այլ հարցեր ևս: ՀՀ վարչապետին ուղղված հարցադրումից ակնհայտ է, որ ուսուցիչն անհրաժեշտ միավորները չի հավաքել տեխնիկական խոտանի պատճառով: Այս առնչությամբ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1.Նման բովանդակությամբ (որ մասնակցել է կամավոր ատեստավորմանը, պատասխանել միայն 13 առաջադրանքի, հաջորդ առաջադրանքները չի տեսել, քանի որ Էկրանի վրա նշում չի եղել, որ կան այլ հարցեր ևս) քանի՞ բողոք եք ստացել, ի՞նչ քայլեր եք ձեռնարկել:

2. Առաջին անգամ էլեկտրոնային տարբերակով անցկացված ատեստավորման արդյունքում չպատասխանած առաջադրանքներով քանի՞ աշխատանք է եղել, և պարզաբանվե՞լ է արդյոք պատճառը:

3. Տրվե՞լ է արդյոք քննական թեստի առաջադրանքների քանակի վերաբերյալ ծանուցում որևէ հարթակում. եթե այո՝ ինդրում եմ տեղադրեք հղումը:

4. Թեստի «ավարտել» հրահանգին կից եղե՞լ է չկատարված առաջադրանքների մասին ծանուցող գործառույթ, որը հնարավորություն կտար խուսափել ուսուցչի վկայակոչած թյուրիմացությունից:

5. ՀՀ վարչապետի «Գնդակահարության պատ» նախաձեռնության շնորհիվ ի հայտ եկած՝ տվյալ ուսուցչի առաջ քաշած (տեխնիկական ծանուցման վերաբերյալ) խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն ի՞նչ քայլեր է ձեռնարկել կամ ձեռնարկում ատեստավորման պատրաստակամություն հայտնած ուսուցիչների գիտելիքի ստուգման համար տեխնիկական շփոթություններից զերծ պայմաններ ապահովելու համար:

ՀՀ Սահմանադրության և «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքի պահանջներով կրկին ինդրում եմ այս գրությամբ ձևակերպված բոլոր (5) հարցերին պատասխանել ամբողջությամբ՝ կետ առ կետ և հնարավորինս հստակ:

Խորին հարգանքով՝ www.mediaforedu.am կայքի խմբագիր՝

Անուշ Մարտիրոսյան



23.12. 2024 թ.

